

Հ. Մ. Գալբյան

Կ. ՊՈԼՍԻ ՀԱՅ-ԿԱՔՈՒԿՆԵՐԻ ԳԱՂՏՆԻ ՏՊԱՐԱՆԸ

Հայկական տպագրության հին շրջանի մի շարք հարցեր դեռևս անլուծելի են մնում դրանց վերաբերյալ արևիվալին փաստաթղթեր չլինելու պատճառով: Ուսումնասիրողի համար միակ աղբյուրը հնատիպ գրքերն են, նրանցում եղած հիշատակարանները, մասամբ էլ այլ առիթներով արված հատուկներ հիշատակությունները: Գծրախտաբար մինչև այժմ չունենք հայ հնատիպ գրքերի լիակատար մատենագիտություն, մի հանգամանք, որ զգվարացնում, նույնիսկ անհնարին է դարձնում հայ տպագրության պատմության բազմակողմանի ուսումնասիրությունը: Վերջականապես շուտարանված այդ հարցերից մեկն էլ Կ. Պոլսի Բեգօղլի կամ Պերա (Պեկօղլի, Բերա) թաղամասում 17-րդ դարավերջում Հռոմի լատին կրոնավորների օգնությամբ, կաթոլիկ հայերի հիմնադրած գաղտնի տպարանի ու տպագրիչների գործունեությունն է: Այստեղ շատ գրքերի հետ տպագրվել են աճախի արժեքավոր հրատարակություններ, ինչպիսիք են Երեմիա Մեղրեցու «Բառգիրք Հայոցը», Խորենացու վերագրված «Աշխարհացոյցը» և «Աղուճազիրքի» Բ տպագրությունը, Խաչատուր Էրզրոնեցու «Քերականութիւնը», տաղարաններ, տոմարներ, այլբանարաններ: Մատենագիտական աղբյուրներում և տպագրությանը նվիրված ուսումնասիրություններում հիշատակվել են այդ տպարանում լույս տեսած գրքերը, բայց բանասերները, հիմնվելով տիպոգրաֆիկների կեղծ տվյալների վրա, դրանք համարել են Լիվոնոյի, Մարսելի, Ամստերդամի տպագրություններ:

Բեգօղլի թաղամասի տպարանի մասին առաջին անգամ տեղեկացնում է Գ. Գալեմբյարյանը «Հանդես Ամսորեայի» 1911 թ. մայիսի համարում տպագրված «Սարգիս Սահլեթճի Գասպարեան» հոդվածում<sup>1</sup>:

Հիշատակելով Սահլեթճի մականվանյալ Սարգիս կախկոպոս Գասպարյանի կողմից լույս տեսված Երեմիա Մեղրեցու «Բառգիրք Հայոցը» և «Ձայնքաղ շարականը», Գալեմբյարյանը գրում է. «Թէպէտ այս երկու գրքերն, ինչպես նաև ուրիշ մէկ քանիներ Երոպա տպուած ցոյց տրուած են տպագրիչներէն, եւ կամ տպագրութեան տեղին զանց անուած, սակայն ստոյգ ապացոյցներ ունիմ, որ ասոնք Կ. Պոլիս տպագրուած են հայ կաթոլիկներու եւ Յիսուսեաններու իբր 1695-ին Պէյօղլու հաստատած տպարանին մէջ, որուն վրայ առանձին գլխով պիտի խօսիմ»<sup>2</sup>:

Հետագայում, որքան մեզ հայտնի է, Գալեմբյարյանը այդ հարցին չի անդրադարձել և դրա վերաբերյալ որևէ այլ ուսումնասիրություն չունի: 1912—1913 թթ. մեծանուն բանասեր Արշակ Ալպոյանյանը «Տպագրութեան արուեստ և Հայք» սովորածավալ, դեռևս ամբողջությամբ չտպագրված, աշխատության մեջ, խոսելով այդ հարցի մասին, հաստատում է Գալեմբյարյանի ասածները, ավելացնելով մի շարք կարևոր մանրամասնություններ և թվարկելով նրանց հրատարակություններից մի քանիսը<sup>3</sup>:

Գալեմբյարյանից և Ալպոյանյանից հետո այս հարցը ուրիշ որևէ մեկի ուշադրությանը չի արժանացել և հայ տպագրության շուրջը եղած աշխատություններում մինչև օրս էլ շարունակում է զանց անվելու Այժմ էլ, անցյալ դարի մատենագետների նման, կաթոլիկների հրատարակած գրքերը վերագրվում են այլ տպարանների կամ առանձին անհատների: Գրանով այդ շրջանի տպագրության պատմությունը ներկայացվում է իրական հիմքից, ժամանակի հասարա-

1 Միայն վերջերս Ա. Մյանսկիյանի անվան պետական հանրային գրադարանը լույս տեսնող «Հայ հնատիպ գրքի մատենագիտական ցուցակ»-ը, որը նշանակալից ներգրում է հնատիպ գրքերի լիակատար մատենագիտություն կազմելու գործում:

2 Այդ հոդվածը հետադարձում մտել է հոդիսակի 1915 թ. Վիեննայում հրատարակած «Կենսագրութիւններ երկու հայ պատրիարքներու եւ տան կախկոպոսներու» աշխատության մեջ:

3 «Հանդես Ամսորեայի», 1911, մայիս, էջ 280: Տե՛ս նաև՝ Կենսագրութիւններ երկու հայ պատրիարքներու..., էջ 83—84:

4 Այս աշխատության մի մասը տպագրվել է «Արթ»-ի 1913 թ. Ա գրքում: